ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ

ք. Երևան 16 հուլիսի 2019թ. Ժամը 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ Հ. Արչունց

Գնահատող անդամներ (ԳԱ)՝ Թ. Զաքարյան, Շ. Հարությունյան

Բացող անդամներ (ԲԱ)՝ Հ. Մելիքյան, Ա. Մխիթարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Բաղդասարյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ ՊԵԿ-ից ստացված Տեղեկատվության գնահատում:
3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի գնահատում:
4. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

2. ՀՀ ՊԵԿ-ից ստացված Տեղեկատվության գնահատում

2.1 ՀՀ ՊԵԿ-ից ստացված Տեղեկատվության համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները՝ «Ստարտկոպի» ՍՊԸ, «Պատրոն ՌՄ» ՍՊԸ, Էդմոնդ Ասատրյան Վիրաբի Ա/Ձ, «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ, «Պրոֆիլայն Էռ Էմ» ՍՊԸ, «Սեգ» ՍՊԸ, Աննա Սահակյան ԱՁ, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ:

3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի գնահատում

3.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները սահմանված կարգով և ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին են ներկայացրել իրենց կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ Հրավերի տեքստի հավելված N 3 և 3.1: Ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերի տեքստով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրերին:

Հիմք ընդունելով 2.1 և 3.1 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ «Ստարտկոպի» ՍՊԸ, «Պատրոն ՌՄ» ՍՊԸ, Էդմոնդ Ասատրյան Վիրաբի Ա/Ձ, «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ, «Պրոֆիլայն Էռ Էմ» ՍՊԸ, «Սեգ» ՍՊԸ, Աննա Սահակյան ԱՁ, ճանաչել **ընտրված մասնակիցներ**:
2. Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և ընտրված մասնակիցների իրական շահառուների մասին տվյալները:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սույն ընթացակարգի հետ կապված անգործության ժամկետ է սահմանվում 5 օրացուցային օր:

4.Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 29-րդ կետը՝ պայմանագիրը կնքելուն հաջորդող օրը Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ _____ Հ. Արչունց

Գնահատող անդամներ (ԳԱ)՝ _____ Թ. Զաքարյան

_____ Շ. Հարությունյան

Բացող անդամներ (ԲԱ)՝ _____ Հ. Մելիքյան

_____ Ա. Մխիթարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ.Բաղդասարյան